

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպէկով:  
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:  
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերից):  
Յայտարարութիւնը ընդունվում է ամին լեզուով:  
Յայտարարութիւնների համար վճարում են  
խրատարները բառին 2 կոպէկ:

### ԲՈՎԱՆԳՐՈՒԹԻՒՆ

Տնային վարժուհիներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ  
Թիֆլիսայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.  
—ՀԵՌՆԱՎԻՐՆԵՐ.—ԲՈՐՏԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ՆԵՐ.—ԲԱՆԱՍՏԻՎԱԿԱՆ. Սարմէ Նորատուկեան.

### ՏՆԱՅԻՆ ՎԱՐՈՒԹԻՒՆԵՐ

Քանի մի ժամանակից սկսած թէ Թիֆլիսից և թէ մանաւանդ դաւաճական քաղաքներից մի քանի հայ ընտանիքներ զինուում են մեր խմբագրութեանը խնդրելով ճարտիրանայ համար անային վարժուհիներին, մի տեսակ բօնան անելով, որոնք կարող լինեն համ խմբագրութեանը փոքրիկ երեխաների մասին, համ էլ խօսել նրանց հետ հայերէն լեզուով: Մեծ մասամբ այդ տեսակ խնդրանքներով դիմում են մեզ այնպիսի ընտանիքներ, որոնք կամ հեռու են ապրում հայաբնակ տեղերից, կամ որոնք շրջանում վաղուց է արդեն չէ տիրապետում մայրենի լեզուն:

Այդ երկայնք, ի հարկէ, երկու կողմից էլ ուրախայի է. նաև հայ մանուկները, որոնք մինչև այժմ միշտ յանձնվում էին վրաց կամ օս զայնակներին և մատաղ հասակից նրանց լսելիքները ընտելանում էին օտար լեզուներին, այժմ կը սկսեն թոթովել իրանց մայրենի լեզուով, այն լեզուով, որ յարմար է իրանց ցեղական, ֆիզիոլոգիական բնածին յատկութիւններին, և երկրորդ բաղաձիւ աղբառ հայ աղջիկները, որոնք աւարտել են իրանց ուսումը մեր այլ և այլ իրական դպրոցներում ու մեծ մասամբ իրանց ամբողջ կեանքը անդրծ էին մտնում, միշտ չը գտնելով զործարար իրանց ստացած ուսումը,—այժմ հետզհետեւ դործ և պարապմունք կը զբաղեն: Ոչինչ աշխատանք ստորացնող չէ. տան վարժուհի, նոյն իսկ մանուկները մօտ բօնան լինել ամենևին պատիւը ստորացնող պատճառ չէ: Գուցէ մինչև հիմա մեր ուսումնական օրիորդները այն կարծիքի էին թէ այդ տեսակ պարապմունքներ ստորացնում են իրանց պատիւը, բայց, ինչպէս երևում է, այժմ այդ նախապաշարմունքը հետզհետեւ անցնում է:

Մեզ դիմող պատուական ընտանիքներ

առաջարկում են այդ տեսակ հայ աղջիկներին, որոնք յանձն կառնեն իրանց մանուկները մօտ բօնայի պաշտօնն ընդունելով քսանից մինչև երեսուն ռուբլի ամսական ածրիկ, ամեն բան պատրաստ: Խմբագրութիւնը սիրով յանձն է առնում առաջարկել այս կամ այն ընտանիքին իրան ծանօթ այս կամ այն հայ վարժուհի օրիորդին, բայց մշտապէս այդ բանով պարագայի ի հարկէ, մեք ժամանակ չունենք, միշտ էլ չունենք անձամբ ճանաչել բոլոր վարժուհիներին:

Կաւ կը լինէր որ այն ընտանիքները, որոնք ցանկանում են իրանց մանուկները համար հայ բօնաներ, անային հայ վարժուհիներ ունենալու, դիմեն Թիֆլիսի հայ օրիորդական դպրոցների վարժութիւններին՝ Գայեանեան, Անանեան և այլ դպրոցների վարժութիւններին, որոնք ուսումնաւարտ օրիորդներ աւելի լայն շրջանի հետ ծանօթ լինելով, աւելի էլ միշտ ունեն լաւ ընտրութիւն անել, օրիորդները միշտ անային վարժուհու կամ բօնայի պատճառ վարժուհու արմատները ընտրել և առաջարկել նրանց հայ ընտանիքներին:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇԱՍԱՒՈՒՆԻՑ մեզ գրում են. «Այս տարի դաբունը այստեղ լաւ է. կղանակը անձրևային է: Մթերքները էփան են. ալիւրի պոքը արժէ 85—90 կօպ., ոչխարի մի ֆունտը 6—7 կօպ., իւղի ֆունտը 18 կօպ., ձուի 7 հատը 5 կօպ., հաւը 15—20 կօպ., մի շիշ կաթ 2 կ.: Տան վարձը չնչին է: Այս տարի խաղողի և ցորենի առատ հունձ է սպասվում»:

Ինչպէս յայտնի է, Ֆրանսիայի պ. Մուրիէ պէտք է չուտով սկսի հրատարակել ԹԻՖԼԻՍԻՈՒՄ մի առևտրական և արդիւնագործական հանդէս (Ֆրանսերէն և ռուսերէն լեզուով), որի վերնագիրը կը լինի. «Revue commerciale et industrielle du Caucase». Այս օրերս ստացանք փարիզում հրատարակված այդ հանդիսի ծրագիրը, սպված Ֆրանսերէն և ռուսերէն լեզուով: Պրոզրամային

նայելով պ. Մուրիէ պէտք է շատ հարուստ տրեստական նիւթ տայ իր բաժանորդներին: Հրատարակութեան տարեկան բաժանորդագրին է Թիֆլիսում 4 ռ., Ռուսաստանում 5 ռ., իսկ արտասահմանում 6 ռուբլի:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են ապրիլի 10-ից հետևալը: «Այս երեկոյ Բաթումի քաղաքացիները հրաժարական ձայնիւրով են տալիս Գուլթայիի նահանգապետ պ. Սիկալովին»:

Մեզ գրում են ԲԱԹՈՒՄԻՑ, որ ապրիլի 7-ին դիւրը այդտեղ դարձեալ հրդեհ կղաւ և մի տուն բոցերին դո՞ դնաց:

ՇՈՒՇՈՒՆԻՑ մեզ գրում են: «Ամիս 7-ին վիշեբը, անյայտ դողը, երբ ամբողջ քաղաքը մշուշով պատած էր և սաստիկ անձրև էր դալիս, կոտրում են տեղացի վաճառական Ա. Կի մազաղինը և 10—12 հազար ռուբլու արժողութեամբ ոսկու և արծաթի իրեր են տանում: Գողերը դեռ ևս դանդաղ չեն»:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՆԻՑ և հետևալը: «Թեմական առաջնորդ Սազիկեանց այս քանի օրերս ճանապարհ կընեն դէպի Էջմիածին և այնտեղից իր պաշտօնավարութեան տեղը.—Կիչինով քաղաքը: Մեծամերկ սպասում ենք նորաստատ սերբապան կարապետ եպիսկոպոս Ալվալեանին, որ շուտով տեղ հասնի և դպրոցական ու այլ գործեր կարգի բերէ»:

«Մշակի» անցեալ 39 համարի ներքին լուրերում մի շատ խոշոր սպառնական սխալ է մտել: Երկրորդ երևի վրա զինուորագրութեան վերաբերեալ լուրի վերջում տպված է. «Ներկայ 1887 թվին զինուորագրութեան կենթարկվին միմիայն նոքա, որոնք ծնվել են 1886 թվին»: Հասկանալի է որ մի տարեկանները զինուորագրութեան չեն կարող ենթարկվիլ, ուրեմն լուրը այսպէս պէտք է լինի. «1887 թվին զինուորագրութեան կենթարկվին միմիայն նոքա, որոնք ծնվել են 1866 թվին»:

Ահա երկրորդ թէ չորրորդ նիստն է, որ Թիֆլիսի Գուման գրադարձ է ջրանցքից օգտվելով միջոցները հարցով: Ավալայի ջուրը դեռ քաղաքը չը հասած մեր քաղաքային ձայնաւորները

այնպէս են այդ ջուրը վաճառում, իրանց ձառերը նրա մէջ լողացնելով, որ ճշմարիտ, մարդ երկիւղ է կրում, որ եթէ այսպէս շարունակվի և ապագայում, ջրանցքում այլ ևս ջուր չի մնայ քաղաքի բնակիչների պիտոյքների համար: Խօսում են խօսում և վերջը անպատճառ համաձայնվում վարչութեան հետ: Զարմանալի էր ճանաւոր իշխան Միքելաձէի դայրոյթը, երբ պ. Վինգելշտետ առաջարկեց առանց վիճարանութեան ընդունել ընդհանուր կանոնները. դո՞նէ պ. Վինգելշտետ անկեղծ խոստովանում է, որ մի և նոյն է վիճակն թէ չը վիճակն, (այդ նա չստեց, բայց ճառի զլխաւոր իմաստն այդ էր), վարչութեան առաջարկված կանոնները կընդունվեն Այս վերջին միտքը գովել է. դո՞նէ վարչութիւնը իր ղեկուցումը կազմելու աշխատել է, տեղեկութիւններ է փոխել և առհասարակ փոքր ի շատե տեղեակ է գործին և ճայնաւորները լաւ են անում, որ վերջին դիւրեկա, հիմնում են վարչութեան հեղինակութեան վրա, քանի որ իրանք իրանց նեղութիւն չեն տալիս ծանօթանալ գործի հետ: Երբ լուրը թէ չորրորդ անգամն է ընկնում է հարցը, ղեկուցումը երկու անից աւելի է տպվել է ու բաժանվել ձայնաւորներին, բայց դո՞նէ մեծ ձայնաւորներ, որոնք բացարձակապէս յայտնում են թէ ծանօթ չեն գործին: Գրանք ճշմարտաւր օտախ օսնել և նա: Ուրիշները կամենում են ցոյց տալ թէ շատ են հետաքրքրվել հարցով և առաջարկում են խորիմաստ հարցեր, բայց բանից դուրս է գալիս, որ ղեկուցումը չեն էլ կարողացել, և ինքճ քաղաքագրութեւն ստիպված է ամեն բոցէ բացատրութեան տալ, թէ այս բանը որի մասին հարցնում են, սպված է ղեկուցման այս ինչ կամ այն կէտում: Զրի համար դներ նը շանակելով վարչութիւնը, որի հետ համաձայնվել է և Գուման, զրկ է հետևեալ պրինցիպը. քաղաքը պարտք է առել մօտ մի միլիոն ռուբլի ջրանցքը շինելու համար: Այդ պարտքի ստիպանելը և ջրանցքը ընթացիկ ծախսելը չընթացանելու համար տարեկան հարկաւոր է հարկեր հինգ հազար ռուբլի: Կախարդական նիստում ամենքը համաձայնվել են այդ պրինցիպն ընդունելու, բայց յանկարծ մէկ էլ տեսնու, վեր է կենում մի ձայնաւոր. «պարտններ, ճառում է նա, ջուրը մարդու ամենազլխաւոր պիտոյքներից մէկն է, նա հարկաւոր է թէ տղամարդկանց և թէ կանանց համար, թէ ձերերին, թէ երիտասարդներին և

—Այ կարգ օրհնվի, էդպէս է... Բայց ասիք տեսնեմ, մի օր որ ես քեզ ողջն տեսցի, ասելով օրհնեալ ի Տէր, լսի մաթալ մնացիք ու պատասխանեցիք թէ՛ օրհնեալ եղբորդ և դնաք ի խաղաղութեամբ...»

Քանի որ օրհասական ժամը մօտենում էր, ինճ չընթացատողները աւելի թանգանում էին՝ որտիս համար: Ես աշխատում էի միայնակ մնալու, որ հրաժարականս տամ ամեն իրերին, ամեն առարկաներին և այնպէս տամ, ինչպէս ես էի ցանկանում և ինչպէս վկանելի ներկայութեամբ չը պիտի կարողանայի անել:

Հասաւ վերջապէս և այն օրհասական ժամը: Եղբայր Ալեքսէի հետ դնացել էին կառք բերելու: Այս միջոցում, մինչև որ մերոնք ժողովում էին, ես պտտեցի մեր ամեն սենյակները: Արցունքը ինճ խեղդում էր: Հօրս չիբուկը ընկաւ աչքուս. վաղցից զրկեցի նրան—մնաս բարով էի ատում նը բան: Մնաս բարով ասելի և մօրս կարելի հանդոցին. անուս էլ ձեռ չեմ տեսնի, ինչու ես ինճ ձեռանից բաժանում, շնջում էի ես վաղցից բակը... Բնութա, Բնութա, կանչեցի շանը: Մնաս բարով, Բուրիա, մեր տան լաւ պահպանը լինես... Բուրիան ձեռքերը լիղում էր: Ես լալիս էի. Բուրիան սկսեց երեսու լիկ... Երբ կառքն էլ ըրին և ամենքս արդէն պատրաստ էինք տանից դուրս գալու, սկսվեցան մընաւորները, որ բողբոլին սե սողից դոյնեցի ստացան: Վերջապէս, տարան ինճ: Համապարհում միտքը չը կար իմ զլխի մէջ, ես մինչև ան-

ամբողջ քաղաքը դիտել Մաթոս աղի թուան ս. Նուէի դպրոց մանուկ համբաւը, և արդեօք զանց առնելու բան էր այդ, որ նրանք չը՝ գալին: «Մուլա» Միմօնը և մեր տանու տէրտէրը նոյնպէս եկան շնորհաւորելու: Մտաբերում եմ, որ «մուլա» Միմօնը երկար խօսեց և վերջ ի վերջ ջոյ իր միտքը ամիսից թէ՛ «մեր ժամանակում չորս բան կայ աշխարհիս երեսին. առաջինը փող, երկրորդը՝ փող, երրորդը՝ փող, և ապա չորրորդը՝ ուսում...» Եւ այս ճշմարտութիւնը հաստատելու համար մի ինչ որ վկայութիւն առաջ բերեց, բայց զրոց լեղւով էր և ես ոչինչ չը հասկացայ: Մեծերի վիճարանութիւնից երևում էր, որ տէրտէրն էլ չէր հասկացել, որովհետեւ մօլլա Միմօնը կպկէր նրա կաթից թէ՛ այդ խօսքերը ինչ են նշանակում և որտեղ են դրած: Քահանան նեղն էր ընկել, և ուղում էր հանաքով մտաւոցութեան տալ նրա յարձակումները:

—Օրհնած հողի, կրկնում էր նա,—մօլլա Միմօնը դու ես, ինճանից ես հարցնում՝ որտեղից է այդ վկայութիւնը:

—Հըր, տեսնում եմ, տեսնելով տեսնում եմ, նկատեց վերջապէս Միմօնը,—որ այս անգամ էլ «մաթալ» մնացիք: Ողորմած հողին լաւ անուն կպցրեց զեղ. տէր-Մաթալ, զորդ որ տէր-Մաթալ... Ինչի պիտի որ մաթալ մնամ, խօսքի տակ չէր ուղում մնալ աւերտը,—հինց իմանաս մի խրթին բան լինի ատածը. ո՞վ չի դիտի, որ ըստ խելոյ թլնակից անցի չի գնայ...»

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ՍՍ.ԼՈՄԷ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Այն երկու շաբաթվայ մէջ մեր ընտանիքում խօսք ու դրոյցի այլ առարկայ չը կար բացի իմ դպրոց մանուկ հանգամանքից: Մտաւորաւ բաժանումը ամենքի դրովը շարժել էր դէպի ինճ. այն օրերում ես վաղեկում էի սրանց ամին մէկի սրտագին ուշադրութիւնը: Մեր՝ երեխանցս մէջ ամենօրեայ սուրբազնիտը վերացել էր. քոյրս և եղբայրս կասեմ մրցում էին իրանց մէջ ինճ հաճոյ լինելու համար: Մայրս չէր կարողանում ինճ վրա նայել առօրեայ զրկիւր և համբուրելու ինճ: Մի քանի անգամ ես նկատեցի, որ նա ինճանից ծածուկ աչքերից արցունքը սրբում էր: Մի բան ինճ շատ էր դարմացնում և այն է, որ հայրս սովորականից ավել ուրախ էր երևում: Այդ ես չի սպասում նրա՝ մօրս հետ ունեցած՝ խօսակցութիւնից յետոյ («Ինչպիսի նկատմամբ»), այդքան ուրախ տրամադրութիւնը ինճ մտատանջում էր: Իմ դարմանքը աւելի մեծացաւ, երբ նա առաջին կիրակի օրը ցանկութիւն յայտնեց մեզ հետ միասին կեկեղցի դնալու: Տարվայ այդ ժամանակ նրա կեկեղցի դնալ մի արտաբոյ կարգի բան էր: Բացի մեծ պատի առաջին շաբաթից, երբ ստի-

բապէս ամեն տարի կը հազարդէր, նա երբեք եկեղեցի չէր յանձնել, թէ և շատ լաւ դիտեմ, որ նա աղօթմանը մարդ էր:

Երբայի պէս մտաբերում եմ, որ այն երկու շաբաթվայ միջոցում ոչ մի երևիթ մեր դերբաստանի մէջ չէր անցնի, որ չը դարձնէր իր վրա իմ մանկական ուշադրութիւնը: Երբ նոր զգացմունքների աղբեղութեանց տակ իմ սիրտն ու հողին ճնշված էին, և ես անասելի ճիգն էի թափում մի օր և է ձեռքածու թել գտնել, որ կարողանայի թօթախել այն ծանրութիւնը, որի տակ խեղդվում էի միանգամայն: Այժմ, երբ, ստանեալ տարիներ են ինճ բաժանում այն ժամանակից, ես տեսնում եմ, որ այն երկու շաբաթվայ միջոցում դուրս եկայ երեխայական օրերից: Երբ աշխարհ էր բացվել առաջիս, բայց այստեղ ևս բողբոլին նման էի անտէր և անղեկավար նաւակին այլքների ծիպանց մէջ: Ինճ թուում էր թէ՛ այս անյայտ աշխարհում ես մի օր ապրել եմ... Յիշողութեանս մէջ՝ կասեմ՝ յարութիւն էին առնում ծանօթ մարդեր, դուրս գալիս, ձեռեր, պատկերներ: Բայց այդ մտքերը չառ չիտի էին և կցկուտը, դաղափարների մեկնութիւնների միանգամայն կարօտ, ձեռքը ու պատկերները՝ առանց նիւթական բովանդակութեան: Իմ այդ խառնուշիտի զգացմունքները աւելի ևս յուզվում էին մեզ այցելողների ինճ վերաբերեալ ակնարկութիւններից:

Այդպիսի, այս երկու շաբաթվայ մէջ էլ ո՞վ մնաց մեր քաղաքում, որ չը դար մեզ ա չը ա ու ս ի.

թէ երեխաներին, ծառայողներին և ոչ ծառայողներին, հիւանդներին և առողջներին, անատաններին և թուրքներին և այլն և այլն... մի խօսքով ամենքի համար. պէտք է աշխատել, որ քան կարելի է, տարածել նրան էփան դնով, պէտք է անվտոյ բաժանվի ջուրը առողջապահութեան պիտոյքներին համար, և այդպէս շարունակ է նա զեղեցիկ ֆրանկերը միմեանց հոտելից (ի հարկէ ջուրը անպակաս է). վերջապէս նա վերջացնում է, ինքնագործութեամբ աչքերը այս և այն կողմ շրջելով: Բայց, պարեն, պատասխանում են նրան, որտեղից կը ստանաք հարկեր հինգ հազարը փող... Ի՞նչ կը զանվի կակաղելով պատասխանում է նա: Սա իղէալիստ ձայնաւորներից չէ...

Թիֆլիսի Գումայի վերջին նիստում շարունակվում էր քննարկը ջրամբարի օգտակար հարցը: Եթէ տանտերը կամենայ ջուր բերել իր տանը և բաժանել նրան տան յարկերի վրա, նա պէտք է վճարի ամեն մի սենեակի համար 2 ռ. 75 կ., արտաքինի համար 4 ռ., բազմաբնակի համար 10 ռ., վանայի համար 6 ռ.: Իսկ եթէ ջուրը չէ բաժանվում յարկերի վրա, այլ պահպան է բազում, այն ժամանակ հաշուում են միայն բնակավայրի սենեակները, որոնցից պէտք է առնվի 2 ռ. 75 կ.: Բայց զբաղվող թէ անաչին և թէ երկրորդ դիպուածում ամեն մի տաւարից կառուցի 3 ռ., ամեն մի կառուցի անիւի համար 1 ռ. 50 կ., բակը կամ այդին ջրելիս մի քանակութիւն սափէնի համար 10 կ.: Փողը պէտք է վճարվի տարեկան երկու անգամ՝ յունվարին և յուլիսին: Տանտերը իրաւունք ունի ջուրը առնել ոչ թէ վերադառնալ հաշուով այլ վնաս օ յ ի հաշուով: Բանեցրած ջրի քանակութիւնը իմանալու համար գործ կը զբվի տանտեղի հաշուով ջրաչափի ճանաչողը այդ դէպքում տրվում է արտոնութիւն, — եթէ նա բանեցնում է երեք ամսում 5,000 վերջուց աւելի ջուր, — վերջուց վճարել ոչ թէ 1/3 կողմից այլ 1/5 կողմ: Մի և նոյն նիստում վճարեցաւ փակել Կարից ջուր վերանցու իջանցը: Սյր իջանցըները փակված կը լինեն միայն ջրկիրների համար:

«Новое Обозр» լրագրում կարդում ենք, որ կիրակի, 12-ին ապրիլի, Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստում ներկայ էին ընկերութեան 47 ներկայացուցիչներ: Վարչութեան նախագահ ընտրվեցաւ իշխ. Ամատունի, վերատուգող մասնաժողովի անդամները նոյն անձինք են մնացել, իսկ վերահսկողական յանձնաժողովի անդամներ ընտրվեցան պ. պ. Նիկողոսով և Սանկիլաճով: Լրագրը խոստացել է տպագրել իր հետեւող համարում ընկերութեան նիստի մանրամասն հաշիւը:

Ֆինանսների և ներքին գործերի մինիստրութիւնը փոխադարձ համաձայնութեամբ մշակվել են նոր կանոններ, որոնց նպատակն է թոյլ չը

գամ չէի հասկանում այն կարճատև նախադասութիւնների իմաստը, որոնցով հայր պատասխանում էր մօր անդադար հարցումներին. ասես կրակի մէջ լինելի: Հայր բռնած ունէր ինձ իր զրկում և իմ սիրտը լցվում էր ջերմութեամբ, երբ ես ամեն անգամ չիում էի նրա ձեռները. այդ ջերմութիւնը տարածվում էր ամբողջ մարմնիս մէջ. անբաւ սէր էի զգում դէպի նա... Երկար ժամանակ ոչոր մտոր փողոցներով անցնելուց յետոյ հոտանք վերջապէս դադարը:

Առաջին անգամն էի ես այստեղ, մինչդեռ՝ ասես թէ՛ ամեն ինչ ինձ ծանօթ էր: Չը դարձաւ ինձ ոչ այն անգամից պարտեղը, որով շրջապատված էր դարձել շինութիւնը, ոչ նրա այն մեծ ու բարձր դահլիճը, ուր մեզ ընդունեցին և որի մէջ հենց այդ ժամանակ վկայում էին սանտահները: Սրանք զոյգ զոյգ ման էին գալի: Միայն միակերպ հագուստը ինձ վրա այն աղբերակութիւնը ունեցաւ, ինչ որ զգում էի միշտ ոչ խարնիր հօտ տեսնելուց: Իմ մտքով անցաւ, որ ես սրանց երբեք մէկը միտքից զանազանել չը պիտի կարողանամ. անքան մէկը միւսին նման երևեցան ինձ: Երբ մեք ներս մտանք այս դահլիճը, սանտահները մէջ նկատելի շող մնացաւ: Թէև օդը թնդում էր աստիճանով, բայց ես լաւ զգում էի, որ նրանց ամենի ուղարկութեան առարկան էր նա: Սյր էր՝ երկի պատճառը, որ վրաս անասելի անթմաժութիւն կեաւ, և մի քանի բոլորից յետոյ զուտ սկսաւ պտտել, չը դիտել ինչպէս կանգնեմ, ինչպէս նայեմ: Չեւեւերս այն

տակ, որ արտասահմանից վերադարձող անձինք ազատ մնան մաքրահարկ վճարելուց՝ անցադրերի մէջ նշանակված ժամանակամիջոցից աւելի մնալու համար արտասահմանում:

Նախիվեան գաւառի ԿԱՐՃՆԻԱՆ գիւղից մեկ գրում են. «Մեր գիւղում ուսումնարան այժմ չը կայ, և այդ պատճառով 50—60 երեխանք մնացել են առանց ուսման: 1875 թվին ուսուցիչ Խ. Տէր-Մարտիկեանցի շնորհով բացված դպրոցը յաջորդ տարին փակվեցաւ, երբ ինքը այդ ուսուցիչը մեռաւ: Երեւելցուն կից շինված վերջին դպրոցը այժմ զիջերապահների կացարան է դարձել: Գիւղացիք, իրանք առանց առաջնորդ և ղեկավար ունենալու չեն կարող ուսումնարան բանալ, ուրիշ ո՞վ պէտք է հոգայ այդ մասին, ոչ թեմական տեսուչ կայ, և ոչ էլ հոգեոր իշխանութեան ներկայացուցիչները տեղիկութիւն ունեն այսպիսի գիւղերի կարիքների մասին»:

Երեքշաբթի, ամսին 14-ին, ուսուցող դրամատիկան խումբը ներկայացրեց Մոզեր և Շեֆտան գերմանացի հեղինակների «Պատերազմ խաղաղութեան ժամանակ» (На маневрах) կոմիդիան: Առաջին գործողութիւնից սկսած մինչև վերջին գործողութեան վարադրեր ընկնելը դահլիճում մի այնպիսի ծիծաղ էր տիրապետում, որ մինչև անգամ դժուար էր լինում ներկայացման ընթացքին հետեւել. աւելի ծիծաղաշարժ պիէսա քիչ է պատահում տեսնել: Կոմիդիայի բովանդակութեանը կարճատև կերպով պատմել դժուար է, քանի որ նա շատ խճճված է. պիէսան վերջանում է երեք թէ չորս հարսանիքով: Գերակատարները մեծ մասամբ իրանց տեղումն էին և հասարակութիւնը բողբոլի, առանց բացառութեան, ծափահարում էր:

Ստացանք ուսուցող բժշկական մի նոր հանդիսի առաջին համարը, որ հրատարակվելու է 5 ՎՊՐՈՆԵՃ քաղաքում և որ կրում է «Медицинская Бесѣда, журналъ популярной медицины и гигиены» վերնագրերը: Հանդիսը պիտի հրատարակվի ամիսը երկու անգամ, Ա. Ս. Սարգիսի խմբագրութեամբ: Մասնագրում են այդ հրատարակութեանը ուսու նշանաւոր թէ արական և թէ իգական սեռի բազմաթիւ բժիշկներ: Հանդիսի տարեկան գինը 4 ռուբլի է: Հասցէն. Воронежъ, 1-ая Острогояская улица, д. Мюфке.

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՆԱՄԱԿ ԹԻՒՌԻԱՅԻՅ  
Կ. Պոլիս, 7 ապրիլի  
Չատիկը բաւական տխուր անցաւ մի խումբ երիտասարդաց համար. սրբա կը սպասէին, և տակաւին կը սպասեն, անախորժ տնօրինութիւն:

աստիճան անկարող երևացին ինձ, որ չը դիտէի ուր դնեմ նրանց, ինչ անեմ, որ ազատ եմ նրանցից: Լուսովիւնը տիրեց ամբողջ դահլիճում, երբ ներս մտաւ տեսուչին, որին ներկայացրին ինձ: Ես դնացի և երկու ձեռներս միմեանց վրա դրած մերձեցայ նրան, նրա ձեռը ընդունելու և հանդուրդու դիտումով: Նա մերժեց: Ամբխճածութիւնս սաստկացաւ առաւել ևս, երբ նկատեցի, որ սանտահները քանձիծաղ էին տալի ինձ վրա: Անհանգստութիւնը յանկարծ պատեց սրտիս, ծանր անհանդուրդութիւն, որի տակին ճնշված, ես սեղմվեցի մօր թիկին, և աղաչում էի նրան, որ ինձ այստեղից յետ տանեն տուն: Տեսուչին, գրուելով ինձ, ձեռքիս բռնած, չը դիտեմ ինչ չընեց հօրս: Սա ինձ համարուեց, համարուեց նաև մայրս ու գնացին: Հեկիկալով և լալով ես մնացի... Նոր կեանք սկսվեց այն օրից ինձ համար:

Չափահաս աղջիկ էի արդէն, երբ ուսման ընթացքը վերջացրի: Իմ ներքին մարդը մեծ յեղափոխման էր ենթարկվել: Իսկական կեանքի չարն ու բարիներից հեռու իմ երևակայութիւնը և ըզգացմունքներս, մնկած ցնորական պաճուճանքներով, զարգացել էին ի վնաս իրական կեանքի պահանջներին: Իմ ստացած դպրոցական կրթութիւնը, այն կրթութիւնը, որի մէջ մեծ յաջողութիւններ էի ցոյց տուել, շատ չուտով նույնացաւ և ժամանակակից թողեց չափ միզապատ և չը փոք յիշողութիւններ ընդհանուր պատմութեան,

ներու կնիքակայ լինել կառավարութեան կողմանէ: Եւրօպիոյ հայոց սարքած ինչպէսնեւրո զոհերը պէտք է որ պօսիցիլը լինեն Անշուշտ գիտեք թէ փարիզու հայերը հացիկրոյթ առին պ. Կասթիլարի և հրաւիրուած էին բազմաթիւ նշանաւոր եւրօպացիներ: Այդ ինչպէս նկարագրին առանձին կերպով հրատարակուած, կը խրկեն փարիզէն ամենուրեք ի թիւրքիս: Բազմաթիւ օրինակներ կը խրոլուն այնպիսի անձանց, ոչ բնաւ յարաբերութիւն չունին փարիզու հայոց հետ: Ֆրանսական թղթատարութեան հրաման կը տրուի օսմանեան կառավարութեան կողմանէ իրեն յանձնել եկած բոլոր տեղակիցներ: Ֆրանսական թղթատարութիւնն ըստ իր պայմանաց պարտաւորեալ էր յանձնել: Կը յանձնուին տեսարկները, և Բ. Գուռը կարճատև ճանաչուին ամեն անոնց, որոց կը խրոլուն այդ տեսարկներն: Գիպուածով կարող եղանք իմանալ մի քանիսներու անուններն, իսկ մնացածները չենք գիտեր. այժմ ամեն ոք որ քիչ չաա կը զբաղէր լրագրութեամբ, աղգային գործերով, կասկածի մէջ է, թէ արդեօր իր անունն ալ արձանագրուած է: Անուններու այդ ցանկն հանդիւժ տեսարկներով կը խրկուի արքունի պալատն: Ինչ պիտի լինի հետեւութիւն, որոչ ոչինչ կրնանք ըսել: Առ այժմ լրտեսներու թիւը շատցած է, և ամեն ոք ընդհանուր դժուարութիւն կրնէ:

Եւ այս բաւ չէ. կը գտնուին աղգային երեսփոխաններ, որ իրենց հակառակորդներու յաղթելու ուրիշ հնար չը գտնելով կաշխատեն իրենց հաւանաւոր սովորութեան համաձայն զանազ կառավարութեան մասնանի ընել իր կասկածելի անձինք: Չատիկ երկու օրն մեր շրջանակներու մէջ ընդհանուր զայրոյթի առարկայն էր տխուր համբաւով հանրաձայնօթ պ. Փափաղեան, որ առանց պատկառելու, առանց մասնաչին, ամենուրեք սկսած է լուր տարածել թէ՛ Եւրօպիոյ հայոց հակաթրքական շարժումները Պօլսոյ հայոց Նիսիսեան կառավարութեան զրգմամբն են: Այսպէսով այդ երեսփոխանը կաշխատի որ կասկածի ներքե լինեն բոլոր Նիսիսեանք, անարեկ մնան, արտարունին և դատապարտուին: Գեղեցիկ գործեր — այնպէս չէ: Եւ կը կը պախարակեն այդ անձը, աս լրագրար կը պատասխանէ թէ՛ եթէ իրենք (նիսիսեանք) համաձայն չեն Վարսելիոյ և փարիզու հայոց ձեռնարկներուն, ինչու համար անոնց թերթերն հակառակ յօդուածներ չեն հրատարակեր փարիզու հայոց դէմ: Իր թէ այդ թերթերը պաշտօնական հանգամանք մը ունենային:

Եւ երկուդն ու տխրութիւնը կաւեւնայ, երբ կը տեսնենք թէ՛ Միացեալ-ընկերութեան շայտատանի փարձարանայ տեսուչն ու փոխ-տեսուչը արտարանայ կը դատապարտուին բարձրագոյն հրամանաւ, թէպէտեւ Կարնոյ դատական իշխանութիւնը վճիռ արձակած լինեն նոյն անմեղութեան մասին:

Հասարակաց դպրոցով կը զրգուի հետզհետէ Զարտիկու Պատրիարքի դէմ, որ այս պարագա-

ներուն մէջ, մասնաւորապէս տեսուչներու արտարան խնդրոյն մէջ թոյլ, նեղ ընթացքի մը հետեւեցաւ, զրեթէ անտարբեր լիթէ մի քիչ աւելի հողած լինէր Պատրիարքը, եթէ մի քիչ աւելի կտրուկ լինէր — ինչպէս աւելի ծանրակշիւ պարագաներու մէջ եղաւ Նիսիսեան — գործերն ուրիշ կերպարանք կը ստանային:

Պատրիարքի տաք ժամանակը Նիսիսե Պատրիարքը, աչքերը խուփ իւր անձին վրայ, երաշխաւորեց Արարատեան ընկերութեան տեսուչներու և վարձպետներու համար — Չէլթունի ապստամբներն, որք զէն ի ձեռին բռնուած էին, ազատ արձակուեցան, ինչպէս նաև Կարնոյ ձերբակալեալք իսկ այժմ Հայոց Պատրիարքը չունենար այնքան աղբեղութիւն, որ ազատէ այնպիսի անձինք, որք նոյն իսկ թուրք դատական իշխանութեանց կողմանէ անպարտ ճանչուած են:

Երբ Թորոլուրդի սիրտն այնպէս դառնացած է, կարելի է որ փութով Չատիկ օրն Պատրիարքի ձեռքն համարելու ու շնորհատրել զնա իւր տօնախմբութեան համար:

Կիրակի, ապրիլի 5-ին, Պատրիարքի տօնն էր, բայց որպիսի անայտնութեան պատրիարքարանի մէջ, հազու քսան երեսփոխանք — և նորա քաղաքական ժողովական ըլլալով կերթան համարել Զարտիկու Պատրիարքի աջո՞ր Բ՛ր են այն օրերն յորս անաղին թափոր մը կաղմէինք ի Գում-Գարու, Նիսիսե Պատրիարքին շուրջը: Եւ ինչ սրտէ բըլթած խօսքեր: Եւ այժմ Վերիէմ-Գուլի և Նիսիսեան հաղիւ թէ կցելով կցկցելով կրցեր են մի քանի անտրոյ անդոյն խօսքեր ըսել:

Իսկ ոգևորութիւնն անդին էր, Պէշիկթաշ էր, ուր հարիւրաւոր հայեր, առաջնորդեալ Նարայէլ խորէն սրբազանէ գնացին գերեզմանատան մէջ հոգեհանգստեան արձիճներ ըսել:

Երկի գեղեցիկ հոգեշարժ տեսարան մը պիտի ընծայէին շատ մը գերեզմանատուններ, մասնաւորապէս Նիսիսե մեր գերեզմանատունն, ուր կը խոճուին ամեն տարի հազարաւոր պանդուխտ հայեր: Սակայն ցուրտ օրն և անձրևն ամեն ինչ խափանեցին:

Կուտոյ նիւթ եղած ինդիք մը առ այժմ կարգադրուած կրնայ համարուիլ, այդ է Խմբիկեանցի կտակի խնդրել: Զատուկ յանձնաժողով մը կազմուած էր այդ կտակի գործադրութեան համար: Զանձնաժողովը ծրագրի մը պատրաստած էր և կորոշէր, ի նկատ առնելով կառավարարին յայտնած փափակները զանազան պարագաներու մէջ, թէ որպիսի գործիչներ պիտի կարենային արժանանալ պարգևի: Հայոց պատմութեան վերաբերեալ դատազրկելը պիտի չը մասնն մրցումի, այս էր Խմբիկեանցի փափակն այլ լաւ դատազրկելը կարող են հանել իրենց ծախքն և շահ

պատող գծու՝ կացուստի հետ մի որ և է նրամանութիւն չը պիտի ունենայ, և եթէ իրականացան չէ կարելի հէնց այժմից փակելն այս զբժու՝ կեանքից, զոնեն, մինչև շինվելու դալը, մտքով հեռանամ, և հանգստութիւն օրոնում վկայելի մէջ: Եւ ինչ երջանակաւ գզգզմունքներով էր համակրում սիրտս, կարգալով այդ վէպերը: Ինքս էի հէնց այդ վէպերի փայլուն դիցազնուհին. մերթ տանջվում էի սիրով, մերթ կրջանկութիւն վայելում, մերթ յուսահատութեան մէջ խորատուգում, մերթ զու՞ էի գնում վեհանձնութեան համար և ամբողջ աշխարհ զբոսանցում, մերթ հանդիսանում էի որպէս լրտեսներու թիւում և իմ ընկառութիւնները հասարակութիւններ էին սասանեցնում...

Հնարիւրը ասեմ, այժմ, երբ մտաբերում եմ այդ ամենը, ես օրիորդ: Սարմէին ատում եմ կարծում եմ, որ «փոքրիկ» Սարմէին իր ձգտումներով հաղթարարական բարձր էր օրիորդ: Սարմէին: Փոքրիկ Սարմէին բարձր, խելքը, ձգտումները և զգացմունքները մտքը էին, քան թէ օրիորդ Սարմէինը: Վերջինը վերացական և խաղաղութիւ կեանքի պտուղ էր, առաջինը՝ արդիւնք իրական կեանքի: Այդ այդպէս լինելով, բայց սակայն հարկաւոր է ասել և այն, որ իմ տեղ եթէ լինէր մի ուրիշ կամ երրորդ աղջիկը, նոյն իսկ էֆֆեկտը պիտի ստացվէր: Բանը ուրեմն իմ անձնատրութեան մէջ չէր, այլ այն պայմանների, որի մէջ ապրում է ստան և վից տարեկան աղջիկը: Նա, ձեռքերը կուրծքին լապաձ, սպորտ է



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորքը շարժի, ապրիլի 29-ին, ՄԵՐՏԻ (MEURTHE) շողնաւոր, նաւապետ ՍԵՐԵՆՕՆ (SERENON) ղուրս կը դնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդուս, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնները մասին պէտք է ղիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արժ-րուհի զարկէռու, № 103.

Hotel Nemecki Edmunda Dziechcinskiego, Warszava, Ulica Długa, № 31.

(Нѣмецкая гостиница Эдмунда Дзехцинскаго, въ Варшавѣ, Долгая улица, № 31.)

Պ. Էդմոնդ Գեյնցլինսկու «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՌԱՆՈՅՐ» վարչապետ, զտնվում է քաղաքի կենտրոնում, գլխաւոր կառավարչական առեւտրների, թատրոնների և առեւտրական կենտրոնական տեղերի մօտ: 90 սենականեր, 30 կոպէկից մինչև 3 բուրլի օրական դնով: Բէնտարան և քաղցրեղէնների խանութ: Հաշը 30 կոպէկից մինչև 1 բուրլի: Կառքեր և դիլիժաններ դէպի բոլոր երկաթուղիները: Կառքերի վարձը շատ էժան: Գրադարան և օտար լրագիրներ՝ ձրիապէս հիւրերի համար: «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՌԱՆՈՅՐ», որ յաճախված է բազմաթիւ հիւրերով Թիֆլիսից և նրա շրջակայքից, ստանում է այդ հիւրերի համար հայտը «ՄՇԱԿ» լրագիրը:

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻԼԻԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՐՈՎԻԶՈՐ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹՈՒՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎՈՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳՂԻՍԻՈՐ ՊԱՀԵՍ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան ղերապաճառատան, և պ. պ. Շահարոնեանցի, Մակիլերի, Սէնչիկովսկու և Ազմուրովի ղերապաներում: ԲԱԳՈՒԻ մէջ՝ Բէկիլերի մօտ, ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կոկոչկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼՈՒՄ Բրօննօցիու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ:

ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(Вѣнскій магазинъ)

Գօլովինսկի պրօպէկտի վրա, Մղիվանի տանը.

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որ մօտ օրերս ստացայ ՎԻԵՆՆԱՅԻ, ՎԱՐՇԱՎԱՅԻ և ՄՍՍՈՎԱՅԻ ամենաառաջնակարգ գործարաններից մեծ քանակութեամբ ՏՂԱՄԱՐԿԱՆՑ և ԵՐԵՎԱՆԵՐԻ զարնանային և աշնանային պատրաստի ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի:

Գները ամենի համար ՄՍՏՁԵԼԻ և ձեռնառու են: Վ. խոզավերջեանց 4-10

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի հասարակութեանը, որ Ձատիկ երկրորդ օրից ԱՋՆՈՒԱԿԱՆ Ն. Պ. ԼՕՐԿԿԻՊԱՆԻՁԷԻ «ՏՐԱՄՎԱՅ» Բօտանդայում սկսվելու է ժողովրդական զուարճութիւնների ամսարային սեզօնը: Ամենայն օր, երեկոյեան ժամի 4-ից մինչև 11-ը, կատարեալ խօրով (38 մարդուց), նուազագետ պ. Գլապաչի անմիջական ղեկավարութեան ներքոյ, կը արվին ԿՕՆՅԵՐՏՆԵՐ, որոնք բաղկացած կը լինեն ամենաընտրի ժամանակակից պիէսաներից:

ՄՈՒՏՔԸ ԶՐԻ Է

Ինչպէս բօտանդան, նոյնպէս և սերբարը զարձեայ կիսով չափ մեծացրած են: Առանձին կօնցիտները և ժողովրդական զուարճութիւնների ժամանակ կը շինվին առանձին տեղեր՝ չնչին վարձով ինտելիգենտ հասարակութեան համար: Գարեջրի պահեստը անցեալ տարվանից տասն անգամ մեծացրած է. ամառվայ համար պատրաստված է մեծ քանակութեամբ լաւ տեսակի բաւարեան և սև զարեջուր: Գարեջրի գնահատողները և քաջ տեղեկները հրաւիրված են փորձելու զարեջուրը՝ առանց վճարելու, վերջիվերջի ճշմարտութեան մէջ համոզվելու համար: Ձատիկ երկրորդ շաբաթից սկսած, չորեքշաբթի օրերը տեղի կունենան ժողովրդական առանձին զուարճութիւններ՝ լարախաղայններով, հրախաղութիւններով, օդափամփուշտներով, և ուրիշ խաղերով, որոց մասին կը յայտարարվի աֆիշներով և տեղական բոլոր լրագիրների մէջ յայտարարութիւններով: Բօտանդայում միշտ կայ ամեն տեսակ սառ ուստիքներ և զովացնող ջրեր (նոյնպէս և քաղցրեղէններ), խմորեղէններու ճախատո:

Բօտանդայի կառավարիչ Յ. ԲԱԿՐԱՋԷ

3-3

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры:

- 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянь“, публич. лекція Д—ра Григорія Арзруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.
2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

(4.)

42-100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли антикарскими товарами въ Тифлисъ (Графская ул., противъ Музея). ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԱՍՍԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՍԱՆ ԱՊՐԱՆԻՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց):

Ստացված է Մալց-Է. կատարակտ և հաղի համար կօնֆիկտներ՝ «Մի հաղի»: Ձկան իւղ մաքրած և ոչ-մաքր. Պրօվանսի ձէթ, քացախի է սէնցիա, բուսական ձէթ, ԲԵՐՃԵՐԻ ԱՄԵՆԱՎԱԻ ԱՆԳԻՆԱԿԱՆ ՕՍԱՅ, լիզակ՝ փոշիով և գունտերով. բժեր հանելու ղեղեր, կօշիկներ և վէռնիճ կօշիկներ համար. սամվարը և առհասարակ մտապէայ գործիքները սրելու իւղ և փոշի: ՇՎԵԳԱԿԱՆ ԳԵՏՏՐԻ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՑԿԻ, և անտեսութեան ուրիշ պարապաներ: Լէնդիլի թխտնու. բաղամբ. թխտնու կրէճ. Էմուլսիա և Լնդուտի կօսմետիական սրբիչներ, երեսի և մորթու թարմութիւնը պահպանելու համար: Արմենիի Էլեոպատ մազերը սնդապնելու համար: Գեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒԻ նրա բաժանմունքում:

Խորէն Ճայրազդն վարդապետ Ստեփանէի հրատարակած

ՄԱՆԿԱՎԱՐՃԱՆՈՅ՝ ԱՄՍԱԳԻՐԸ

Պիտի հրատարակիչ Պետերբուրգում կանոնաւոր կերպով ՄԱՆԿԱՎԱՐՃԱԿԱՆ և ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ուղղութեամբ ներկայ 1887 թ-ի սեպտեմբեր ամսից քանի մի հայազն երկասարանների զորձակցութեամբ և աշխատակցութեամբ: Տարեկան գինն է 5 ռուբլի:

Հասցէ. Редакція „Манкаваржаноць“. Петербургъ. Невскій проспектъ д. армянской церкви. 4-4

ՀԱՂՈՒԵԿՂԻՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Յ Ի

ց 1-ն Ապրիլի 1887

Table with financial data columns: Description, Թիֆլիսում, Բաղուայ բաժն., Ընդամենը, Գ Ա Ր Տ Ք, Թիֆլիսում, Բաղուայ բաժն., Ընդամենը. Includes rows for various items like flour, oil, and other goods.

\*) Բողոքուած մօրճակներից վճանները, որոնք կարող են տեղի ունենալ, ծածկելու համար յատկացրած է առանձին դոււար. 129,491 ռ. 17 կ.